Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի <<Այգեշատի Յու□ Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականության (11դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

–Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,

–Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

անձը հաստատող փաստաթուղթ

–,,Հանրակրթության մասին,, ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/

–Ինքնակենսագրություն /Ձև 5/

–այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

–ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

–Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ /առկայության դեպքում/

–որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակը համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկաեն թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտըվերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **մայիսի 4–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա մայիսի 6–ին՝ ժամը 14:00–ին, ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի Յու□ Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում□ հասցեն՝Արմավիրի մարզ, Արմավիրի տարածք, գ□ Այգեշատ փ□9, շ□4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ **093–34–05–39 հեռախոսահամարով:**